

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի ուղերձը սումգայիթյան ողբերգության տարելիցի կապակցությամբ

28.02.2022

Սիրելի՛ հայրենակիցներ

1988 թվականի փետրվարի վերջին օրերին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում ապրող հայության հանդեպ պետական մակարդակով կազմակերպվեց և իրականացվեց հրեշավոր ցեղասպանություն, որը մինչ օրս այդպես էլ հավուր պատշաճի չդատապարտվեց թե՛ Խորհրդային Միության, թե՛ միջազգային հեղինակավոր ատյանների կողմից:

Սումգայիթի հայերը սպանվեցին ու խոշտանգվեցին, բնավեր եղան ամենաբարբարոսական եղանակներով, միայն այն պատճառով, որ հայ էին ծնվել: Բառերով դժվար է նկարագրել այն արհավիրքը, այն ոճրագործությունները, որոնք ապրեցին Սումգայիթի հայերը եղերական այդ երեք օրերի և դրանց հաջորդող դեպքերի ընթացքում: Սումգայիթից հետո, թևավորված ԽՍՀՄ կառավարության թողտվությունից և ոչ համարժեք քայլերից, Ադրբեջանի կառավարությունը սաստկացրեց հալածանքներն ու բռնությունները Ադրբեջանի մյուս հայաշատ վայրերում՝ Բաքվում, Գանձակում, Շամխորում և այլուր: Բռնագաղթի ենթարկվեցին հարյուր հազարավոր հայեր, իսկ Սումգայիթյան ցեղասպանության հերթական արարը կրկնվեց 1990 թվականի հունվարին, արդեն Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում:

Սումգայիթի ավելի քան 17 հազար հայ ընտանիքները ապաստան գտան աշխարհի տարբեր երկրներում, մի մասն էլ հանգրվանեցին Հայաստանում, այդ թվում՝ Գեղարքունիքի մարզում և այսօր էլ մեզ հետ միասին մասնակցում են հայրենաշինությանը:

Սումգայիթյան եղեռնը, անշուշտ, շարունակությունն էր այն հայասպան քաղաքականության, որի հիմքերը դրվել էին 19-20-րդ դարերում, Օսմանյան Թուրքիայում և ընթացք ու թափ ստացել 1918-1920 թվականներին, Ադրբեջանի Հանրապետությունում: Այն մեկ անգամ ևս եկավ փաստելու, որ հայությունը պետք է համախմբվի իր պետականության, համազգային նպատակների շուրջ՝ դիմագրավելու՝ աշխարհաքաղաքական աղետները և իրեն նետված նոր մարտահրավերները: Խոնարհվում եմ Սումգայիթում նահատակված մեր անմեղ զոհերի հիշատակի առաջ, քաջալերում բոլոր հայ ընտանիքներին, ովքեր վերապրել են այդ եղեռնի սարսափները:

Հավատացած եմ, որ կգա արդարության ու հատուցման օրը, և համայն հայությունը կվայելի իր ազատ ու խաղաղ զարգացման տևական ժամանակաշրջանը: